

րաց, և յառատ տուրս հայ ձեռաց առ հղօրագոյնս, և նախանա-
մութեան տնօրինելով՝ դադրելով հօն ուր հիմայ կեցած են, ի
պանծալի գլուխ վենետկոյ. վասն զի այսպէս պատշաճական և ար-
ժանաւոր է մեզ կոչել զեկեղեցի Սրբոյն Մարկոսի՝ ի հոյս հարիւրա-
ւոր սուրբ և քաղաքական շինուածոց աղբիական զխոյն:

Շարունակելի:

ՄԱՍԻՔ

Պատմական աւանդութեան համեմատ Մասիս իւր անունն առած
է Ամասիա նահապետէն, թէպէտ և քննութեան արժանի է և այն
ցարդ տեղող աւանդութիւնը, ըստ որում փոքր Մասիս հին տառն
ՍԻՍ կ'անուանուէր, իսկ Աւագն՝ ՄՍ - ՍԻՍ, նման հին քանի մի զոյգ
տեղեաց, որոց մին ՄՍ մասնկամբ կը կոչուէր, իսկ միւսն ոչ: Օտար-
ազգեաց ամենէն աւելի ծանօթ տեղին բոլոր Հայաստանի մէջ այս
է, և սրբա քանի որ սկսան քննել զՀայաստան, այս երկու լեռները
ՄՍԻՍ և ՓՈՓՐ ՄՐՄՐԱՅ կը կոչեն. թէպէտ և այս բանս չի ստուգուիր ոչ 'ի
Ս. Գրոց և ոչ 'ի նախնեաց մերոց. վասն զի Արարատ՝ աշխարհին
կամ երկրին անունն է, և ոչ թէ այս կամ այն լեռան, և այս երկրին
մէջ փոխուող լեռինք, յորս են և Մասիք՝ Արարատեան կը կոչուին:
Այս լեռանս բարձրութենէն աւելի՝ համաշխարհական համբաւ Ջըր-
հեղեղին՝ Ս. Գրոց հաւատացողաց մտաց մէջ զրոյմեալ ապաւորեց
մեր ազգին և լեռան յիշատակը: Ուստի թէպէտ և ոչ 'ի Ս. Գրոց և
ոչ յարտաքին պատմութենէ կրնանք աներկբայ ցուցնել թէ ստու-
գապէս նոյեան տապանը իշաւ Մասեաց վրայ, սակայն յոյժ հաւա-
նական է, (մանաւանդ թէ հարկ է խոստովանիլ՝ որ տապանն իշաւ
Արարատեան յերանց վրայ, որով բովանդակ Հայաստանի լեռինք ևս
կ'իմացուին). վասն զի այժմեան և հին կարծիքն այս է, և 'ի վերջին
դարս բոլորովին զայս կը յատկացընեն Մասիս լեռան. որով պէտք է
սրբազան ինչ համարել այս լեռը, ինչպէս որ անոր շրջակայքը բը-
նակող նախնիք մեր սրբազան և ահեղ կը համարէին զայն, թէպէտ
ոչ յիշատակաւ յընդեղին, այլ գէթ իրենց առասպելաց համե-
մատ՝ ֆալցաց բնակութիւն կարծելով զայն: Զայս կ'ապշտեն ևս լե-
ռանս բնական տեսքն և կազմութիւնն, ուղղակի գէպ 'ի վեր բար-

ծրուծիւնն, հեռուէն տեսնուիլն, և 8000' բարձր միշտ ծիւնապատ
գագաթն, զանազան երկրաշարժից, պատռումանց, և 'ի բաժակէն
ելած կրակի, ծխոյ, և 'ի վերջին դարո՝ ջրոյ, հողախառն և քարայրն
նիւթոց ձեռքով եղած այլալուծիւնքը՝ Յաւել ևս որ յառաջին ժա.
մանակս անմատչելի և ոնեւանելի կը համարուէր, ինչպէս ցարդ բա.
զումք այնպէս կը կարծեն, այնպէս որ էլ միաժնի վարդապետք
չհաւատացին Բառողի գերմանացւոյ բանից և գրուածեանց, որ յա.
մի 1829 առաջին անգամ՝ ելաւ մինչև 'ի գագաթն Մասեաց, սակայն
իրմէ վերջը և այլք ելան ստուգապէս, յորս նշանաւոր է Պրայս
անգղիացին (1876), Բառող, Պրայս և Խոժքոյ քան զայլս աւելի
մանրամասն և երկարօրէն գրեցին իրենց ելից և լերան վրայօք որով՝
եթէ ոք փափաքի մանրագատուում՝ գիտութեան, կրնայ դիմել անոնց,
իսկ մեհրէ համառօտիւ 'ի մէջ կը բերենք զբնականն և զպատմական.

Մասեաց երկու լ'րինքն միազանգուած համարելով, երկայն ձուա.
ձե խարխիս մի կը կազմեն հիւսիսային — արեւմտեան և հարաւային —
արեւելեան կողմանց՝ մէջտեղ գտնուած տափարակ հովտի ձեռքով.
այս խարխիսն երկայնութիւնը քսան մղոնի չափ է, իսկ լայնութիւնն՝
10 ի կը հասնի։ Արդ, վասն զի այսչափ անձուկ է յատակն Մասեաց.
և իրեն մօտ Երասխայ դաշտն հիւսիս — արեւելեան կողմը, 2500' էն ա.
ւելի բարձր ծովու երեսէն, իսկ միւս կողմէն ունի Կոզովտի դաշտն
որ 4 — 5000 ոտք բարձրութիւն ունի, ուստի Աւագ Մասեաց գերթէ
16,000' բարձրութեամբ գագաթն՝ ուղղակի կը տեսնուի յերեք
կողմանց, ուղիղ բարձրացեալ գրեթէ 12,000 կամ 13,000 . բայց
մեծ լերան խարխիսն շրջապատն քսանուհինգ մղոնէ աւելի է։ —
Մեր հին պատմիչը գեղեցիկ կերպով կը նկարագրէ Մասեաց այս
ձևը. « Հարաւայինն (նկատմամբ Արագածայ) արեգականաճեմ՝
լեռան՝ սպիտակափառ սննելով գագաթն, ուղղորդ 'ի յերկրէ բու.
սեալ, երեքօրէիւ՝ որպէս ասաց ոմն 'ի մերոցն՝ քաջագօտւոյ առն
շրջապատեալ ճանապարհաւ. և առ փոքր փոքր 'ի շէշտումն անկեալ.
ծեր ոմն արդարեւ լեռան 'ի մէջ երիտասարդացեալ լերանց »։ Նոյն
հեղինակն կամ ուրիշ աշխարհագիր մի՝ Մասեաց և Արագածու վը.
րայ կը գրէ՝ թէ « ոչ ունին գնացս, այլ շեղանման կան 'ի մէջ Հա.
յոց »։ Միայն արեւմտեան կողմէն Աւագ Մասեաց ճիւղերն Սիւնկ
կոչուած լերանց շղթայից հետ կը միանան, զորս կրնանք Արաքս.
տեղան շերիւք կոչել։ Այսպէս յանկարծակի և ուղղակի բարձրանա.
լուն պատմաբան, աշխարհիս ոչ միայն շատ լեռներէն, այլ գրեթէ
ամենէն աւելի բարձրագոյն կ'երևի. վասն զի ըստ վկայութեան ա.
կանառեսից թէ Մասեաց և թէ այլոց լերանց, ոչ Հնդկաց Հիմա.
լայեան հսկայակերպ լերինքն, և ոչ Ամերիկոյ Անտեանքն չունին Մա.
սեաց երկնաճեմ վեհութիւնը, ինչպէս որ յետոյ պիտի տեսնենք։

Ինչպէս բարձրութեամբ՝ նոյնպէս ձևովն և կազմութեամբ և բո.

վանդակ իւր տեղըն Նշանաւոր է Մասիս . վան զի դրոէն բոլորովին սառի նման կը փայլի, իսկ ներսէն՝ ստուգապէս կրակի հնոց ունի . նոյնպէս դրսէն զանազան նիւթերով տնէ և խոշոր կերպարանք առած է . բոլորն հզօր և սարսափելի պղատոնական զօրութեամբ ձևացած է, ուստի և Արևմտեան Ասիոյ հրաբլիցի դասուն մէջ կը դրուի : Սակայն ոչ մի՛ այլ շատ անգամով ընդունած է այժմեան ունեցած կերպարանքն ու ձևը, և երկրաբանից կարծեաց համեմատ շատ դարերու մէջ փոփոխութիւն կրած է, և վերջապէս այժմեան կերպարանքն է պայտած և ամբարտակ մի Երասխեան դաշտի և զայն Արածանեայ գետահովտէն բաժնող լեռանց մէջտեղ : Այս պայտած ձևին երկու ծայրքն ալ բարձր են, մի ծայրն հիւսիս—արևմտեան կողմը Աւագ Մասիս, խոշոր և տգեղ ժայռերով պատեալ, սակաւ մի ծռած, որոյ գագաթն բոլորովին կոնածէ չէ, իսկ մէջն՝ փոս է . և հիւսիս—արևելեան Երասխայ դաշտին կողմէն ճեղքուած և բացուած է, իբրև ահաւոր հրաբլիսի խառնարան մի, զոր մեր նախնիքն վիճ Մասնաց կամ փրշած Մեծ լեռան կը կոչեն . այս բացուածքէն յայտնապէս կը տեսնուի լեռան նիւթոյն զանգուածն, որ է սովորաբար Որձաքար (տրաքիտ), և Հրուս (Pyrote), երբեմն անկանոն խաւերով, և երբեմն խառն զանգուածովք : Պայտած ձևին միւս ծայրն է փոքր Մասիս, քարերու կողմանէ նման է Մեծին, բայց անբոլոր անման, ամէն կողմէն բաժնուած է, կանոնաւոր կոնածէ բարձրացած է : Այս երկու ծայրից մէջտեղ տափարակ հովիտ կայ 8000' էն աւելի բարձր, որոյ տրամագիծն է կէս բնամիլոն, և 8273' բարձրութեան վրայ անցնելու ճամբայ կայ : Ապիւս գերմանացի այս կողմերու Նշանաւոր երկրաբանն՝ կը համարի թէ Գիւփ—կէօլ տափարակ դաշտն ևս հնուց 'ի վեր դուրս ձգուած է, և զոյգ է մեծ Մասնաց, որոյ չորս կողմն կան այլ բազմաթիւ մանր կոնածէ լեռիք վերջէն բարձրացեալք : Այս Գիւփ—կէօլն գրեթէ 11,000 (ըստ Բառոգի 10,860') բարձրութեան վրայ լճակ մ'ունի, և չորս միլոնի չափ հեռու է Աւագ Մասնաց գագաթէն արևմտեան—հիւսիսային կողմէ, իսկ Մասնաց բուն կոնն խարսխէն մինչև ցգագաթն՝ գրեթէ 6000' է : Գերապանծ գագաթանս բարձրագոյն կէտն յերեսաց ծովու («ը երկու և երեք անգամ՝ չափուեցաւ, և աննշան տարբերութիւն մի գտնուեցաւ չափուց մէջ») սովորաբար 15,871 բարիզեան ոտք, 16,916' անգղիական կը համարուի : Բառոգ առաջին չափողն ծանրաչափ գործւով 17,325' անգղիական ոտք համարեցաւ, իրմէ ետքը Ֆետտորով 17,130' եռանկիւնաչափութեամբ, իսկ ոմանք միլիոնը գրին 17,260 : Ասիոյ մէջ քան զինքն արևմտագոյն կողմը եղած լեռանց բարձրագոյնն է, նոյնպէս քան զամենայն լեռինս Եւրոպիոյ, և քանի որ վերան ելլուած և չափուած չէր, բարձրագոյն կը կարծուէր Էովկասու՝ Էլպուրուզ և Տիխզաւ լեռանց, և Պարսկաստանի Տէմալէնտին, որոց

բարձրութիւնն բարիզեան ոտից չափով այս է, ըստ իւրաքանչիւր համեմատական բարձրութեան.

Տէմավէնտ 'ի Պարսս, Կազբից ծովուն հարաւակողմը .	20278	օտք
Էլպուրզ, 'ի Կովկաս .	17425	»
Տիխուա, անդ .	16837	»
Աւագ Մասիս .	15871	»
Քաղպէք, 'ի Կովկաս .	15524	»
Սաւալան յԱտրպատական .	14816	»
Արագած լեռն .	12606	»
Փոքր Մասիս .	12061	»

Աւագ Մասեաց գագաթն գմբեթաձև կլոր է կամ եռանկիւնանման, լայնագոյն կողմն գրեթէ 900' է, փոքրագոյնն՝ 600', որ սակաւ մի դէպ 'ի հիւսիս—արևմուտս կը հակի յատակին կողմէն. հիւսիս—արևելեան կողմը հազիւ հակեալ է, իսկ միւս կողմերէն բոլորովին դարուվար ու ծռած է. և արևելեան կողմէն սակաւ մի ձիւնապատ տեղ 'ի բաց առեալ՝ Ակոռույ մեծ գահալիժին վրայ ծռած է.— Շուրջը եղած բլրոց երկուքն որ քան զայլս բարձրագոյն են, հեռուէն կրկնակի երևոյթ կու տան Մասեաց. այս բլուրներուն իրարմէ հեռաւորութիւնն 350 Չ. է, որոց մէջտեղն խոր ձորակ մի կայ գրեթէ 100 կամ 150' տղմայից, յորում անցողաց ոտքերը կը խըրին. Արևմտեան բլուրն գրեթէ 30' բարձրագոյն քան զմիւսն՝ Մասեաց գագաթանց բարձրագոյն կէտն է, լայնութեան 390 և 2' աստիճանին տակ, Երկու գագաթանց վրայ ալ մէկմէկ խաչ կանգնեցին, Բառոդ՝ յամի 1829, Խոճքոյ՝ 1850, Բայց Պրայս 1876 ին ելլելով անոնց և ոչ մին գտաւ. Մասիս հեռուէն եռագագաթ կ'երևի տեղ տեղ, օրինակ իմն Պայէ. զիտէն, վասն զի բաց 'ի վերոյիշեալ երկուքէն՝ ուրիշ բլրակ մ'ալ կ'երևի բարձրագոյն քան զայս. ի բաց առեալ Դիպեթայ քանի մի գագաթունը՝ զորս Անգղիացիք չափեցին, Մասեաց գագաթն բարձրագոյն կէտ եղաւ երկրաչափական քննութեանց քան զայլ ամենայն գագաթունս երկրի. Գագաթան վրայ հրարդխի կամ խառնաբանի նշան չ'երևնար, ուսկից մինչև 3000' մշտնջենաւոր սառաւանակը պատած են Մասեան վերին մասը, և ասկէ վար հող գտնուած տեղ լեռնային բոցեր ալ առաջ կու գան. Մասեաց վերին կողմը ելլողներէն շատեր ծծմբոյ սաստիկ հոտ առին, թէպէտ և հովը կը բերէր զայն հեռուէն. Այս սառնեղէն գմբեթին ստորոտին մօտ՝ հիւսիս—արևելեան կողմէն կ'սկսի Մեծ պառաւառաճն կամ վիհն Մասեաց. զոր կը նմանցընեն Սիկիլիոյ Եանա լեռան Val del Bove (Եզնաձոր). կոչուած պատառուածին, և մզոնէ մ'աւելի Լրկայնութիւն օւնի, ուսկից Սեւա չոքն վազելով՝ վարը գետ կը ձևանայ. Երբեմն այս վհին բերանը սառով կը գոցուի, և յամի 1816 երկու Գուրդք ուղեւով անցնիլ անոր վրայէն, սառը կ'օտրեցաւ, մին վհին մէջ ին.

կաւ, իսկ միւսը հրացանէն կախուելով, որ սառույցի մէջ խրեր էր, սառեցաւ մեռաւ: Վհին և ջրոյն եզերքը դէպ 'ի վեր Մենաստուսն Ս. Թաւկովթայ Ողբիւրդին 6000' բարձրութեան վրայ է, իսկ վարի կողմն է Ազոտի աւանն, որք բոլորովին կործանեցան յամի 1840 եղած մեծ սասանութեան և ժայթքման ատեն: Մասեաց վրայ շատ անգամ պատահած են անյիշատակ ևս և պատմական ժամանակներէ 'ի վեր, այսպիսի ժայթմունք, աւերմունք և կործանումն, որք անժխտելի ապացոյց են ներքին հրաբխային զօրութեանց, որք դրսէն ալ տեսակ տեսակ կերպարանօք յայտնի կը տեսնուին. ոչ միայն մեծ վհին վրայ, այլ և պասալտիկ և գոլերիտ խանձաքարանց ընդարձակ պատառուածոց մէջ: Չորս կողմը կան ևս կոնաձև բլրակք և փոքր խառնարանք, մանաւանդ հարաւ — արևելեան կողմը, և ֆիփ — կէօլ բարձրագոյտին վրայ, յորում գետի նման վազող նիւթերն ճեղքեր են այդ տափարակ հովիտը, ուր կը վերջանայ կրկնագմբէթ գագաթներով լեռնաբլուրը, որոյ բարձրութիւնն է 3248' Չ:

Քարահեղեղին երկու կողմէն առատ ալպեան բուսաբերութիւն և մարգագետին կայ. խանձաքարանց կողմը և միւրի մնացորդը հեղեղին զերանը պատեր են, որ արևելեան կողմէն լեռան բարձրութեան վեցերորդ մասը կը ծածկէ: Հոսանքին սկիզբը երկու ընդարձակ բաժակաձև ծոցեր կան, և խաւ խաւ խանձաքարեր, վրանին միխրախառն զանգուածով ֆիփկէօլի հիւսիսային կողմն ալ մեծ պատառուած մի կայ, որ մինչև Գոշրկանի հրուանդանը (բարձր 9800') կը հասնի, մեծամեծ կոյտերու հոսանք, և հօն կը վերջանայ, Նոյն լեռան ստորոտը ուրիշ երկու բաժակաձև ծոցեր ալ կան աւանաճիղ նոյն գոլերիտ խանձից հոսանք, որք յառաջ կու գան ևս և հեռու ասդին՝ անդին հիւսիս — արևելեան երաւիսայ գաշտին վրայ գտնուած բլուրներէն: Գուրկանայ հիւսիսային կողմը սակաւ մի վար կոնաձև գուրս յցուած ապառաժներ կան որք Գըզ — գայաւ կը կոչուին:

Մասեաց ետեը հարաւ — արևելեան կողմը հրաբխային մեծ պատառուած մի կայ, որ գագաթաններսէն սկսելով՝ երթալով կը լայննայ մինչև կոնին ոտքը, և այս խոշորաձև պատառուածին երկու կողմէն ալ կարելի է ելլել Մասեաց գագաթան վրայ, ինչպէս որ յամի 1844 — 5 ըրաւ Ապիլի, և զայս ինքն է ծանուցանող: Այս պատառուածին յատակը գմբէթի ձև կ'առնու ֆիփկէօլին հովտին պէս, լի է որձաքար քուէիւք ապակեայ ֆէլտսիպադի. ունի ևս բաժակաձև ծոց մի, ուսկից դէպ 'ի մէկ կողմը որձաքարի զանգուած տարածուած է, խոշոր հատուածակողմամբ պատեալ: Այս որձաքարանց կոյտը վարի կողմը ծածկուած է վերէն վազած խանձից հոսանք, և ասոնցմէ վեր հարաւդիս կոնից չլիթայ մի կայ, որոցմէ ոմանց բոլորչի բաժակներն ամբողջ և անարատ մնացեր են, յորոց գուրս վազեր

է օսաք մոխիր, մոխրադիրտ և խանձախիճ (capilli), և կարծես թէ գեռ նոր վազեր է. հոսանաց ընթացքը փայլուն և պայծառ կ'երևին. Այս հրաբխային կոնից մօտ ուրիշ կոնաձև բլուրներ կան բոլորովին ծածկեալ մոխրով, թուի թէ այս ամենայն դուրս եկած է կողմնա-կան մեծ պատառուածէ, որոյ երկայնութիւնն քանի մի մղոն է և կը վերջանայ 'ի մեծ մոխրակոյտ կոնն' որ Գառնընաբլուրը կամ Գառնընաբլուրիք (փորապատառ) կ'անուանուի. Ասոնց արևելեան կողմէն ուրիշ շատ կողմնական ժամանակակից պատառուածներ կան, որոնց հեղեղներն յայտնի կ'երևնան. Մշտնջենաւոր ձեանց մօտ ժայթքման մեծ կոն մ'ալ կայ, սև և ճեղքեալ զանգուածով փայլուն սպիտակութեան մէջ, որոյ հոսանքն իրեն բարձր ամբարտակ կ'երևնան դէպ 'ի դաշտն իրախայ հակեալ, և կարծես թէ այս թումբին մէջ երկայն փողոակներ դրուած են. վասն զի երկայն խողովներ կան որ դէպ 'ի վար իջնելով կ'ընդարձակեն և իրարու հետ կը խառնուին. վերոյիշեալ խորշաձև պատառուածին վերին կողմը տեղ տեղ պարզ ժայռեր կան, որոց զանգուածն մեծ լերան զանգուածին հետ նոյն է, այսինքն որձաքար և հրուտ (ծծմբային երկաթ), որոնք օդոյն ազդեցութեան տակ կը լուծուին և կը փշրին, և ծծմբոյ հետ կ'արձըկեն:

Մասեաց այցելու երկրաբանից քննութեան համեմատ ստոյգ է որ թէպէտ Մասեաց վրայ այսքան հրաբուլդներ բացուած են, բայց երկուքին տափակ գագաթներն հրաբխային բաժակներ չեն, և անոնց հրաբխային ձևը ներքին բռնութիւններէ առաջ եկած է, և այս զօրութիւնք դուրս ժայթքեցուցած են որձաքարանց կոյտերը, և շատ անգամ պատռելով զկոնն՝ Աւագ Մասեաց կողերն լայնցուցած են և տգեղ և խորտուրորա դարձուցած են: Հիմակուան հրաբխային լերանց աւելի նման է Քիփկէօլ: Այսու հանգերձ հաւանական է՝ որ 'ի սկզբան Ետնէի նման հրային գագաթներ ունեցած են և Մասիք, և շատ ժամանակէ վերջը խառնարանին եզերքը կործանելով, քարանց ժայթքելովն աւրուեր է, և հիմակուան ձևը առեր է. այս պատճառաւ քննիչներէն և տեսնողներէն ոմանք առանց տարակուսելու կը հաստատեն թէ Մասեաց վրայ հրաբխային եղած է երբեմն: — Ոչ սակաւ երկրորդական և կողմնական հրաբխային գագաթներ կան Մասեաց վրայ, և ասոնցմէ կը գտնուին նաև կրկին Մասեաց մէջ եղած տափարակ ձորին վրայ. ամենէն բարձրն է Դաշգիլիսէ կոչուած կոնաձևը, Սէրուարպոշագայ և Աւագ Մասեաց

1. Սղիւարդ և Ֆրէյզըր ելողք և քմնիք յամի 1855, և Դեսիէ այս կարծիքն ունիմ. վերջինս կը համարի թէ կողը պատող խամօից հոսանքը գագաթէն ելած է, և այսպէս կը գրէ. Toute la surface du cône est couverte par un épanchement de laves, qui est bien évidemment sorti du sommet. Եւ այնքան մօր կը համարի խամօից երևոյթը՝ որ կարծէ թէ դեռ շինած չէ Ռաբուլդը. On serait tenté de ranger l'Ararat parmi les volcans actuellement en activité. — TEXIER,

գագաթան մէջ, որոյ բարձրութիւնն 12,000' էն աւելի է:— Գրեթէ միւս ծանօթ հրաբուդիւններէն ժայթքած նիւթերուն ամէն տեսակներն ալ կը գտնուին Մասեաց վրայ, որոց մէջ է նաեւ դիրտ, չեչաքար, կպրաքար, կրային եղնգնաքար (obsidian). իսկ հարաւ—արեւմտեան ստորոտը կայ հրաբղխային ապակեքար սև գունով կամ կանաչա-սեւաւ, զոր նախնականայ բրուտներն կ'առնուն կը ծեծեն և ծծմբուտ պղնձի հետ խառնելով գեղեցիկ կանաչ ապակաբուռ կը շինեն: Շատ



Յովսէփ Բիբուն տը Դուռնըֆոր

կողմերն ալ մանաւանդ ստորին մասերն բոլորովին աւազով և խնով պատած են, այնպէս որ գրեթէ անկարելի է վրայէն քալել, որով Դուռնըֆոր շատ նեղուեցաւ ասոնցմէ՝ բուսոց քննութեան ելնելու ատեն: Ուրիշ կողմէն ալ իբրեւ դուրս ձգուածք անճոռնի ապառաժներ կան, մանաւանդ արեւմտեան հիւսիսային կողմը, զորս նոյն բուսաբան ճանապարհորդն իրարու վրայ խոնած հոմերական լեռանց կը նմանցընէ, այսինքն՝ Ովսայ և Պելիոնի: Եր յուսանք որ դեռ ուրիշ հրաբղխային, բնական և երկրաբանական նիւթեր ալ պիտի գտնուին Մասեաց վրայ, եթէ կտրելի ըլլայ ամէն կողմերը քննութեան ենթարկել, որ դիւրին գործ չէ:

Շարունակելի